

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

## ՎՐԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔՆ Է

Մայիսի 26-ին, Վրաստանի առաջին ժողովրդավարական հանրապետության հռչակման 104-րդ տարեդարձի առթիվ, Վրաստանի մայրաքաղաքում եւ երկրի բոլոր տարածաշրջաններում անցկացվեցին տոնական միջոցառումներ:

Թբիլիսիում անկախության հռչակման 104-րդ տարեդարձը նշանավորվեց գորահանդեսով, գորակազմերի երդման արարողությունով, մշակութային, մարզական միջոցառումներով, էկոնոմիկայի եւ գյուղատնտեսության ոլորտներում ձեռքբերումների ցուցահանդես-վաճառքներով:

Մայրաքաղաքում անցկացված

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Վրաստանի պետական անկախության վերականգնման 104-րդ տարեդարձի առթիվ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին շնորհավորական ուղերձներ են հղել տարբեր երկրների պաշտոնատար անձինք:

Մասնավորապես, Վրաստանի դեկլարներին տոնի առթիվ շնորհավորել են Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը, ուրիշներ:

Վրաստանի վարչապետին

հասցեագրված շնորհավորական ուղերձում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը վրաց ժողովրդին մաղթել է բարգավաճում եւ խաղաղություն:

«Հարեանք եւ բարեկամ Վրաստանի անկախ պետականության անպարտելի ուղին կարելու է հայ եւ վրացի ժողովուրդների ինքնության եւ հոգեւոր արժեքների պահպանման, պատմության դժվարին

ժամանակաշրջաններում միմյանց աջակցելու, բարեկամության ոգուն ու էությանը հավատարիմ մնալու տեսանկյունից:

Վստահ եմ, որ երկու երկրների հարաբերությունների հիմքում ընկած բազմաբնույթ համագործակցության արդյունավետ փորձը, անհրաժեշտ ջանքերով, կշարունակվի փոխշահավետ ձեռքբերումներով՝ ի շահ երկու երկրների ժողովուրդների եւ առկա տարածաշրջանային մարտահրավերների հաղթահարմանը»,- ասված է Նիկոլ Փաշինյանի շնորհավորական ուղերձում:

## ՀԱՍՏԱՎՈՐՈՒՄ ԿՑՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱՎԼԻ ԴՈՒՐԲԱՇՎԻԼԻ. «ԴԱՎՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՎ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ»

ՄԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ԴԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՆԱՄՊԱՏԿՎԵԼ Է



Այս օրերին շվեյցարական Դավոս քաղաքում անցկացվեց Համաշխարհային տնտեսական համաժողովը, հնարավոր է՝ Վրաստանի էկոնոմիկայի համար արտակարգ նշանակություն ունենա:

Վրաստանի առջեւ ծագել է նոր, իրատեսակական հնարավորություն, որն անմիջականորեն առնչվում է ռուս-ուկրաինական պատերազմին: Փաստորեն, տնտեսա-

կան բոլոր ուղղություններով առկա է պատերազմի բացասական ազդեցությունը տնտեսական արդյունավետության վերածելու հնարավորությունը: Ռուս-ուկրաինական պատերազմը շատ փոփոխություններ է բերում (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

### «ԻՄ ՃԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՆՉԱՄԲ ԱԿԱՆԱՏԵՍ ԼԻՆԵԼ ԸՆԹԱՑԻԿ ԲՈՒՐ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, իր խոստման համաձայն, շարունակում է տարածաշրջանային շրջագայությունը: Մայիսի 21-ին վարչապետն այցելեց Շիդա Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներ:

Իրակլի Դարիբաշվիլին, կառավարության անդամների հետ միասին, ուսումնասիրեց երկրամասում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերը, ինչպես նաեւ՝ այցելեց պետական ֆինանսավորմամբ ստեղծված ձեռնարկություններ եւ ծանոթացավ «Նորացված մարզերի» շրջանակներում իրականացվող աշխատանքներին, հանդիպումներ ունեցավ տեղական ինքնակա-

ռավարման մամինների ներկայացուցիչների, բնակիչների հետ:

- Այսօր ակամատես եղանք մունիցիպալիտետներում ընթացող աշխատանքներին, որոնք մենք՝ կառավարությունը, իրականացնում ենք: Տեղեկացնեմ, որ այս նախագծերը սկսել ենք անցյալ տարի, եւ ին ցանկությունն էր՝ անձամբ գնալ, ամենուր այ-



ցել ընթացող աշխատանքներին՝ համոզվելու, որ ամեն ինչ կարգին է,- ասաց Վրաստանի վարչապետը եւ հավելեց, որ, ընդհանուր առմամբ, այս ծրագրերի վրա ծախսվել է 46 մլն լարի, իսկ միայն տարածաշրջանում ծախսվել է ավելի քան 400 մլն լարի:

## 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

1918 թվականի մայիսի 26-ին, թբիլիսյան ժամանակով ժամը 17:10-ին, Վրաստանի ժողովրդավարական կառավարությունը, Նոյե ժողովրդային զլխավորությամբ, հռչակեց 19-րդ դարի սկզբներից Ռուսաստանի կայսրության կազմում ներգրավված Վրաստանի անկախությունը:

Առաջին ժողովրդավարական Հանրապետությունը գոյություն ունեցավ ընդամենը երկուսուկես տարի, որից հետո այն խորհրդայնացվեց: Խորհրդային Միության փլուզման պայմաններում, 1991 թվականի ապրիլի 9-ին, Վրաստանը կրկին հռչակեց անկախությունը՝ հենվելով 1918 թվականի մայիսի 26-ի անկախության հռչակագրի վրա:

1918 թվականի մայիսի 26-ին ազգային խորհուրդը հռչակեց երկրի անկախությունը, հատուկ բանաձեռով սահմանեց երկրի կարգը՝ ժողովրդավարական Հանրապետություն: Օրենսդրական մարմնի գործառույթները վերապահվեցին ազգային խորհրդին, որի նախագահի պաշտոնում Նոյե ժողովրդային փոխարինեց Նիկոլոզ (Կարլո) Չխեիձեն: Նույն օրը ազգային խորհուրդը հաստատեց Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության կոալիցիոն կառավարությունը՝ Նոյե Բանիշվիլու զլխավորությամբ:

1918 թվականի հոկտեմբերին ժողովրդավարական Վրաստանի օրենսդրական բարձրագույն մարմինը՝ ազգային խորհուրդը վերանվանվեց Վրաստանի խորհրդարանի: 1919 թվականի սկզբներին, ժողովրդավարական ընտրական համակարգով անցկացվեցին երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի սահմանադիր ժողովի ընտրությունները: Ընտրությունների արդյունքներով, ճնշող մեծամասնությամբ հաղթեցին սոցիալ-ժողովրդավարները: Սահմանադրական ժողովի կազմում ընտրվածների թվում էին երեք հայազգի ներկայացուցիչներ՝ Ռուբեն Աուշտուլը, Միկիթ Բարդոյանցը եւ Էլեոնորա Բարսեգովա-Մախվիլաձեն: Հիմնադիր ժողովի առաջին նիստն անցկացվեց 1919 թվականին, մարտի 12-ին: Հիմնադիր ժողովի նախագահ ընտրվեց Նիկոլոզ (Կարլո) Չխեիձեն:

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՀԱՅՎԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐԲԱՆՅԱԿԸ՝ ԵՐԿԻՐ ՄՈՒՐԱԿԻ ՈՒՂԵՇՐՈՒՄ

Մայիսի 25-ին Երկիր մոլորակի ուղեծիր է դուրս բերվել Հայաստանի առաջին տիեզերական արբանյակը:



Ինչպես հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, 2022 թվականի մայիսի 25-ին, Երեւանի ժամանակով 22:35-ին, ԱՄՆ-ի Կանավերալ իրվանդանում գտնվող տիեզերակայանից, Space X ընկերության տիեզերանավով, Երկիր մոլորակի ուղեծիր է դուրս բերվել Հայաստանի Հանրապետության առաջին տիեզերական արբանյակը:

Վաչապետի խոսքով, սա տեղի է ունեցել հայկական պետական «Գեոկոսմոս» բաժնետիրական ընկերության եւ իսպանական «Ատալանտիս» ընկերության համագործակցության արդյունքում:

- Տեղի ունեցածի նշանակությունը հնարավոր չէ գերազանցատել, սրանով Հայաստանի Հանրապետությունը թեւակոխում է տիեզերական գործունեության դարաշրջան,- ասաց Հայաստանի վարչապետը:

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Մայիսի 25-ին, ժնեւում անցկացվող Առողջապահության համաշխարհային 75-րդ ամենամյա վեհաժողովի շրջանակներում, կայացավ Վրաստանի առողջապահության նախարար Ջուրաբ Ազարաշվիլու հանդիպումը իր հայ գործընկեր, Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հետ:



Հանդիպմանը նախարարներն անդրադարձել են առողջա-

պահական համակարգերի առաջին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՀԱՍՏԱՎՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԴԱՎՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍՏՈՂՈՎԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳՐՅԱԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյուններ է իրականացրել աշխարհում: Դրանցից նշանակալիներից մեկը ներդրումային երթուղիների փոփոխումն է և Բազմազան է զ, որ ներդրումային երթուղիներից մեկն անցնի Վրաստանով: Պատերազմական իրավիճակում գլխավոր գործոնը, որն ազդում է ներդրումային հոսքերի վրա, կայունությունն է, որը պահպանված է Վրաստանում և վեր է ածվում գլոբալ լոջիստիկայի նշանակալի միջանցքի: Հատկանշական է, որ այն առնչվում է ոչ միայն Վրաստանին, այլև ողջ Հարավային Կովկասին:

Վերոնշյալ առաջնահերթությունների իրականացմանն էին ուղղված Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, պատվիրակության անդամներ փոխվարչապետ, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլու և արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլու՝ համաժողովի շրջանակներում անցկացրած հանդիպումները: Մասնա-

վորապես, վրացական պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան «Ripple» ընկերության գործադիր տնօրեն Բրեդ Գարլինդհաուսի, «Salesforce» ընկերության նախագահ էմի Կիվերի, Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Քրիստալինա Գերոզիելայի, ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Հելգա Մարիա Շմիդի, «Citibank»-ի բանկային, կապիտալի շուկայի և խորհրդատուների փոխնախագահ Ջեյ Քոլինզի հետ:

Համաշխարհային տնտեսական համաժողովի լիագումար նիստում, իր ելույթում Վրաստանի վարչապետն անդրադարձավ եվրասիական գործընթացին:

- Ասոցացման համաձայնագիրը մենք ստորագրել ենք 2014 թվականին, սա հիմնական փաստաթուղթն է, ուղեցույց լի-



րավ ու ամբողջական անդամակցության համար: Մենք ունենք ազատ առևտրի համաձայնագիր, առանց վիզայի ռեժիմ, սա մեծ ձեռքբերում է, և մենք հենց նոր անդամակցության պաշտոնական դիմում ենք ներկայացրել: Մենք այլ այլընտրանք չունենք: Սա վրաց ժողովրդի, վրաց ազգի ընտրությունն է: Մենք ամեն ինչ կանենք եվրասիական հնարավորինս մոտենալու և մեր վերջնական նպատակին հասնելու համար, որը լիիրավ անդամակցությունն է,- ասաց վարչապետը:



ԱՄՆ

ԳՆԴԱԿՈՇՈՒԹՅՈՒՆ՝ 21 ՄԱՐԿԱԿՅՈՒՆ ԶՈՐԵՐՈՎ

Մայիսի 25-ին, ԱՄՆ-ի Տեխասի նահանգի հարավի տարրական դպրոցներից մեկում իրականացված գնդակոծության հետևանքով, զոհվել է 21 մարդ՝ 18 երեխա և երեք չափահաս: Այդ մասին հաղորդել է նահանգի սենատոր Ռոլանդ Գուտիերեսը:

Նա հայտնել է, որ հրաձիգը ճանաչված է, նա 18-ամյա Սալվադոր Ռամոսն էր, որը, ըստ երեւույթի, սպանվել է միջադեպի վայր ժամանած ոստիկանների կողմից: Դպրոց ուղևորվելուց առաջ Ռամոսը կրակել է իր տատիկի վրա, որն առայժմ ողջ է և գտնվում է հիվանդանոցներից մեկում: ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենը կարգադրել է խոնարհել դրոշմերը՝ ի հիշատակ զոհվածների:

ԱՍՏՕ

ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ԱԼՅԱՆՍԻ ԳՈՐԾԵՆՎԵՐԸ ԶԷ

ՆԱՏՕ-ի նոր ռազմավարությունը, որը դաշինքը կքննարկի հունիսին, Մադրիդի գազաթափողովում, Ռուսաստանին չի դիտարկի որպես ռազմավարական գործընկեր:

Այս մասին հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը:

- Ռազմավարական հայեցակարգը ՆԱՏՕ-ի ամենակարևոր փաստաթուղթն է՝ Վաշինգտոնի պայմանագրից հետո, վերջին ռազմավարական հայեցակարգը համաձայնեցվել է 2010 թվականին: Դրանից հետո աշխարհը արմատապես փոխվել է, և դա պետք է արտացոլվի նոր ռազմավարական հայեցակարգում: Օրինակ՝ ներկայիս ռազմավարության մեջ մենք Ռուսաստանին անվանում ենք ռազմավարական գործընկեր,- ասաց Ստոլտենբերգը:

Նրա խոսքով, ներկայիս ռազմավարական հայեցակարգում չիմաստանը նշված չէ:

ՍՈՒՂՈՎԱԿ

ՄԵՂԱՂՐԱՆՔ՝ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐԻ ԴԵՄ

Սուղդայի կռուուպցիայի դեմ պայքարի դատախազությունը երկրի նախկին նախագահ Իգոր Դոդոնին 30 օր ժամկետով ձերբակալելու թույլտվություն է խնդրել:

Ներկայացված հայքը ուսումնասիրում է Քիշնևի շրջանային դատարանը: Սուղդայի դատախազությունը Դոդոնին մեղադրանք է ներկայացրել 4 կետով, այդ թվում մեղադրելով կռուուպցիայի և հայրենիքը դավաճանելու մեջ:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նախագահություններին, խոսել խնդիրներից, ներկայացրել նոր, համակարգային բարեփոխումների ծրագրեր:

Հայաստանի առողջապահության նախարարն առաջարկել է Վրաստանի գործընկերոջը՝ փորձի փոխանակում իրականացնել դեղորայքային քաղաքականության ոլորտում: Անահիտ Ավանեսյանը

նր Զուրաբ Ազարաշվիլուն իրավիդեց Հայաստան՝ Երևանում հոկտեմբերի 5-7-ին անցկացվող Արագ արձագանքման բժշկական թիմերի 5-րդ գլոբալ հանդիպմանը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԴԱՇԿՐԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Վրաստանի պաշտպանության ուժերի պատրաստության և ռազմական կրթության ու պաշտպանության նախարարության անձնակազմի կառավարման վարչությունների պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվում էր Հայաստանում:

Հայաստանի պաշտպանության նախարարությունում կայացած հանդիպմանը՝ կարելի էր պաշտպանության բնագավառում վրաց-հայկական համագործակցության շարունակականության ապահովումը և փորձի փոխանակումը բարեփոխության ամրապնդման ոլորտում: Քննարկվեցին զինված ուժերում բարեփոխության ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքները, հետագա քայլերն ու համագործակցության հնարավորությունները:

Պատվիրակության անդամներն այցելեցին նաև Հայաստանի Պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան, ծանոթացան «Լավ կառավարում է բարեփոխության ամրապնդում» առարկայի դասավանդման ծրագրի ներդրման գործընթացին և մեթոդաբանությանը:



Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակի համատեղ ծրագրի ընթացքը, ինչպես նաև նախանշվեցին նոր համատեղ ծրագրային ուղղություններ:

Կողմերը պայմանավորվեցին առաջիկա շփումների ու փոխայցելությունների վերաբերյալ:

ՀԱՍՏԱՎՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՇԿՐԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Մայիսի 24-ին կայացավ Վրաստանի ժողովրդական պաշտպան Սիմո Նոմահայի և Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանի տեսակապի միջոցով հանդիպումը:

Զրույցին Վրաստանի ժողովրդական պաշտպանը Քրիստինե Գրիգորյանին շնորհավորեց Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ և վերա-

հաստատեց համագործակցությունը խրատեցնելու իր պատրաստակամությունը: Զրույցին քննարկվեց անձանց սոցիալ-տնտեսական իրավունքների ոլորտում կարողությունների զարգացմանն ուղղ-

ՌՈՒՄ - ՌԻՎԱԻԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԻԼԻԱ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՌԻՎԱԻԿԱՅԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՆՔ»



Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլու խոսքով, Վրաստանն անում է առավելագույնը իր ուկրաինացի ընկերներին աջակցելու համար:

Ինչպես նշեց ԱԳ նախարարը, Վրաստանն աջակցում է Ուկրաինային հուսանալի տարր ոլորտում, այդ գործընթացը շարունակվում է, և օգնության նման մակարդակը շատ կարևոր է Ուկրաինայի համար: Նախարարի խոսքով, Վրաստանից Ուկրաինա է առաքվել շուրջ 500 տոննա մարդասիրական բեռ:

- Վրաստանը իր գործընկերների հետ շատ ջանք է գործադրում Ուկրաինայի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը աջակցող դիրք գրավելու համար, և այդ գործընթացը կշարունակվի ապագայում,- ասաց Իլիա Դարչիաշվիլին:

ՌԻՎԱԻԿԱՅՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՎՈՐՁՎԵՑ ՄԻՆՉԵՎ ԱՄԱՌՎԱ ԿԵՐՋ

Ուկրաինայի խորհրդարանը երկարածեց է պատերազմական դրությունը մինչև օգոստոսի 23-ը: Որոշմանը կողմ է քվեարկել 320 պատգամավոր: Ռազմական դրության երկարածումն հետ միասին, ընդունվել է որոշում՝ մայիսի 25-ից Ուկրաինայում 90 օրով երկարածել նաև ընդհանուր մոբիլիզացիան:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԹԵՎԱԿՈՒՆԵԼ Է ՎՃՌՈՐՈՇ ՓՈՒԼ

Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավարի խորհրդական Ալեքսի Արեստովիչի հայտարարությանը, պատերազմը թեև կհաջակցի Երոկոլ վճռորոշ փուլ: Նրա պարզաբանմանը, ամենաբարդ իրավիճակը ստեղծված է Բախմուտի ուղղությամբ, որտեղ ռուսական զորքերը, վերջին երկու օրվա ընթացքում, բացառիկ ակտիվություն են ցուցաբերում:

40 ՄԻԼԻԱՐԴ ԴՈՒՍԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՌԻՎԱԻԿԱՅԻՆ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը ստորագրել է Ուկրաինային 40 միլիարդ դոլարի օգնության փաթեթը:

Այդ գումարի զգալի մասը կուղղվի Ուկրաինայի ռազմական կարիքները հոգալուն:

Հիշեցնենք, որ Սենատը մայիսի 19-ին հավանություն է տվել՝ Ուկրաինային 40 միլիարդ դոլար օգնություն հատկացնելու մասին օրինագծին:

ՆԱՏՕ-Ն ՌԻՎԱԻԿԱ ԶՈՐՔ ԶԻ ՌԻՎԱԿԻ

ՆԱՏՕ-ն Ուկրաինայում հակամարտության կողմ չի լինի, զորքեր չի ուղարկի այնտեղ, քանի որ մտադիր է խուսափել Ռուսաստանի դեմ պատերազմից: Մայիսի 24-ին այդ մասին հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը՝ հանդես գալով Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովում:

- ՆԱՏՕ-ն հակամարտության մաս չի լինի, մենք մեր զորքերը չենք ուղարկի տարածաշրջան, որտեղ նրանք ուղղակիորեն կնեղքաշվեն պատերազմի մեջ: Աջակցություն Ուկրաինային, այո՛, բայց՝ առանց ուղղակիորեն պատերազմի մեջ ներքաշվելու,- ասաց Ստոլտենբերգը ընդգծելով, որ ՆԱՏՕ-ն մտադիր է թույլ չտալ, որ հակամարտությունը վերածվի Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի պատերազմի:



Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅԻՍԻ 23-Ը՝ ԱՐԽԱԶԻԱՅԻ ՕՐ

ՄԱՆՈՍԵ ԶՈՒՐԱԲԵՐՈՒՄԻ. «ԶԿԱ ՎՐԱՍՏԱՆ ԱՌԱՆՑ ԱՐԽԱԶԻԱՅԻ ԵՎ ԱՐԽԱԶԻԱ՝ ԱՌԱՆՑ ՎՐԱՍՏԱՆԻ»



Օրվա կապակցությամբ, ողջ Վրաստանին, հատկապես արխազ եղբայրներին եւ քույրերին իրենց շնորհավորանքներն են հղել Վրաստանի վարչապետ Իրակլի

Չամայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի նախածեռնությամբ եւ օրհնությամբ մայիսի 23-ը հայտարարվել է Արխազիայի օր:

Ղարիբաշվիլին, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

- Մայիսի 23-ին, մենք, մեր հայրենիքում նշում ենք Արխազիայի օրը: Չամայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի օրհնությամբ սա եւս մեկ հրաշալի ավանդույթ է, որը խորհրդանշում է վրացիների եւ արխազների միասնությունը: Այսօր մեզ բաժանում է օկուպացիոն գիծ, բայց այն, ինչը մեզ միավորում է՝ ընդհանուր պատմությունն ու մշակույթը, արժեքները եւ մեր երեխաների ավելի լավ ապագայի ձգտումը, մեզ համոզում ենք է տալիս, որ վաղը նույնպես պատկանում է միասնությանը, խաղաղությանը եւ բարեկամությանը: Մենք ամեն ինչ անում ենք դրա հա-

մար, եւ հավատում ենք, որ հեռու չէ այն օրը, երբ մենք կկարողանանք վերամիավորվել՝ հանուն ապագայի եւ միասին կառուցել հզոր, զարգացած, եվրոպական երկիր,- հայտարարեց վարչապետը:

- Այսօր Արխազիայի օրն է: Այսօր մենք տեսնում ենք բազմաթիվ առասպելներ, թյուր պատկերացումներ եւ ակնառու փաստեր, որոնք բացառապես ռուսական գործոն են: Այսօր մենք տեսնում ենք մեր կայիս օկուպացիայի սարսափելի հետևանքները. արխազական լեզուն եւ մշակույթը անհետանում են մեր աչքի առաջ: Սակայն իրականությունը նույնն է՝ չկա Վրաստան առանց Արխազիայի եւ Արխազիա՝ առանց Վրաստանի,- նշեց Սալոմե Զուրաբիշվիլին:

ԲԱՆԱԿ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի պաշտպանության նախարարությունը շարունակում է քաղաքացիներին ընդունել պայմանագրային ծառայություն: Ողջ երկրում ընթանում է պայմանագրային զինծառայության վերաբերյալ տեղեկատվական քարոզարշավ:

Քարոզարշավի շրջանակներում, բնակչությանը մանրամասն տեղեկատվություն է փոխանցվում պայմանագրային ծառայության ժամկետների, ինչպես նաեւ՝ ըստ մասնագիտության պաշտպանության ուժերում աշխատանքի տեղավորման հնարավորությունների մասին:

Նշվում է, որ 4 տարվա պայմանագրային զինծառայության կրճատման Վրաստանի 18-35 տարեկան քաղաքացիները: Զինվորականներին կտրամադրվեն ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան ամենաբարձր որակի համազգեստ, զին-տեխնիկա, սնունդ, անվճար բուժօգնություն, սոցիալական եւ իրավական պաշտպանություն:

Պաշտպանության նախարարությունը ստեղծել է լավագույն պայմաններ մոտիվացիայի բարձրացման, կրթության հնարավորությունները բարելավելու եւ կարիերայի առաջխաղացման համակարգի բարելավման, աշխատավարձերի բարձրացման ու սոցիալական ապահովության երաշխիքների զարգաց-

ման համար:

Գերատեսչությունը կենտրոնացած է պաշտպանական ուժերում ձեռք բերած գիտելիքներով եւ փորձով՝ զինուժը մրցունակ դարձնել նույնիսկ ծառայությունն ավարտելուց հետո: Նշվում է, որ 18-40 տարեկան քաղաքացիները կարող են պաշտպանության բանակում աշխատանքի տեղավորվել սեփական մասնագիտությամբ: Զինվորական պայմանագրային ծառայության զրանցման ընթացակարգերը հնարավորինս պարզեցվել են: Գրանցումը հասանելի է առցանց՝ ողջ տարվա ընթացքում:

Պայմանագրային զինվորական ծառայության եւ պաշտպանության ոլորտում աշխատանքի տեղավորման տեղեկատվական արշավը երկրի ողջ տարածքում կտեղի երկու շաբաթ:



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ

ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԻ ԸՆՈՐՅԱՆԴԵՍ ԱՆԱԼՑԻՆԵՐՈՒՄ

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչությունում կայացավ World Vision Ավստրիայի, World Vision Վրաստանի եւ «Բյուրոյ Արտի» ընկերության համատեղ նախագծի շնորհանդեսը: Նախագծի նպատակն է՝ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման օժանդակությունը, որի շրջանակներում կմշակվեն զբոսաշրջության ձեռնարկներ: Զեռնարկներում մանրամասն տեղեկատվություն է ներկայացված երկրամասում տեսարժան վայրերի, զբոսաշրջության երթուղիների վերաբերյալ:

Նախագիծը ներկայացրին զբոսաշրջության ոլորտի փորձագետ Ֆլորիան Վան Դեր Բելենը, World Vision Վրաստանի Սամցխե-Ջավախեթի օրագրի մենեջեր Նինո Լոմիձեն, ուրիշներ:

Շնորհանդեսին ներկա էին Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, երկրամասային վարչության ներկայացուցիչներ, տարածաշրջանի մունիցիպալիտետների քաղաքապետեր, Ախալցխեի տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ԱՆԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻՑ ԵՐԵՆԱՆԵՐԻՆ ԿՏՐԿԻ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»



Մայիսի 24-ին Նինոմիդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը հանդիպեց մունիցիպալիտետում բնակվող սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների ծնողների հետ, ովքեր, տարբեր պատճառներով, ներկայումս չունեն սահմանափակ հնարավորության կարգավիճակ, ինչի պատճառով չեն կարողացել օգտվել կառավարության կողմից սահմանված աջակցության փաթեթից:

Նինոմիդայի մունիցիպալիտետում 13 երեխա կա, ովքեր դեռ չունեն այս կարգավիճակը:

- Մեր նպատակն է՝ ծնողների հետ բացահայտել բոլոր այն հանգամանքները, որոնք խանգարում են՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին կարգավիճակ ստանալու հարցում, թերեւս ծնողներին առաջարկենք մեր օգնությունն ու աջակցությունը այս խնդրի լուծման համար: Զրույցի ընթացքում տեղեկացրել ենք, որ, զուգահեռաբար, քաղաքապետարանն ունի սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների սոցիալական աջակցության միանվագ փաթեթ, որից կարող են օգտվել բոլոր նշված

երեխաները՝ անկախ կարգավիճակից,- ասաց քաղաքապետ Անի Մոսոյանը:

ԱՌԱՋԻՆ «ԱՐՄԱՔ» ԿԵՆՏՐՈՆԸ ԾԱԿԱՅՈՒՄ

Ծալկայի մունիցիպալիտետի Օգնի գյուղում «ԱրՄաք» հիմնման օրագիրն իրականացվել է՝ «Ջավախքի աջակցություն» հիմնադրամի (ԶԱԳ), «Յ. Յովնանյան ընտանեկան հիմնադրամի», Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՄ) հետ գործընկերությամբ եւ բարերար Ռազմիկ Բլիկյանի ֆինանսական աջակցությամբ:

Նշենք, որ Սամցխե-Ջավախեթիում արդեն գործում են թվով 10 «ԱրՄաք» կենտրոններ, իսկ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Ծալկայի մունիցիպալիտետում սա առաջին կենտրոնն է, որտեղ արդեն իսկ սովորում են շուրջ 60 երեխա:

Օգնիում «ԱրՄաք» կենտրոնը գործում է Արմենակ Ավագյանի տանը, որը տանտեղը տրամադրել է անհատույց, իսկ վերանորոգումն ու կառուցապատումն իրականացրել է ծննդով օգնեցի բարերար Ռազմիկ Բլիկյանը:

«ԱրՄաք» օրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանի խոսքով, երեխաները կենտրոնում սովորում են ծրագրավորում, ռոբոտաշինություն եւ եռաչափ մոդելավորում, որոնք ապագայի ամենապահանջված մասնագիտություններից են:

Միջոցառմանը ներկա էր եւ Ելույթ ունեցավ Վրաստանում Չայնաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սարգսյանը:

Օրագրի նպատակն է՝ խթանել Ջավախեթիում տեխնոլոգիական կրթության զարգացումը, տեխնոլոգիական զբաղվածության ընդլայնումը, հավելյալ տնտեսական ակտիվությունն ու՝ ստեղծել աշխատանքի հնարավորություններ, ինչպես նաեւ հայրենիքը չլքելու հեռանկարներ:

«Horizon Europe» ԴՐԱՄԱՇՆՈՐՅԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ՝ ՄԱՍՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ ԶԱՄԱՆԱՐԱՆՈՒՄ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության նախածեռնությամբ ողջ երկրում շարունակվում է «Horizon Europe» դրամաշնորհային գրասենյակների ստեղծման գործընթացը: Նոր դրամաշնորհային գրասենյակ է բացվել Ախալցխեում՝ Սամցխե-Ջավախքի պետական համալսարանում:

Արարողությանը մասնակցել է կրթության եւ գիտության փոխնախարար Նունու Միցկելիչը:

Նշենք, որ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու անմիջական մասնակցությամբ 2021 թվականին Վրաստանը դարձավ ԵՄ նոր հետազոտական եւ ինովացիոն «Horizon Europe» օրագրի անդամ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՒՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

# ՎՐԱՍՏԱՆԻ ԱՊՐԱԳԱՅԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)



թյան օրը, հիշատակում է բոլոր նրանց, ովքեր պայքարել են ու բերել այս օրը, պահպանել մեր ինքնությունն ու ազատությունը:

- Մենք նշում ենք մայիսի 26-ը՝ մեր անկախության օրը, եւ հիշում ենք բոլոր նրանց, ովքեր պայքարեցին եւ այս օրը բերեցին մեզ, պահպանեցին մեր ինքնությունն ու ազատությունը: Նրանք արյուն են թափել եւ զոհաբերել իրենց կյանքը, որպեսզի մենք կարողանանք ամրագրել մեր սեփական դիրքորոշումը, ընտրել Վրաստանի ապագան եւ հավակնել մեր եվրոպականությանը,- հայտարարեց Սալոմե Ջուրաբիշվիլին:

## ԿԱՅԱՅԱՎ ԶՈՐԱԿՈՇԻԿՆԵՐԻ ԵՐՊԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի անկախության օրվան նվիրված միջոցառման շրջանակում, ավանդության համաձայն անցկացվեց ժամկետային զինծառայողների երդման արարողություն:

Նորակոչիկների անձնակազմը հանդիսավոր եր-

րբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը:

Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ եւ պետնախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, Ախալքալաքի կենտրոնում անցկացվեցին մի շարք տոնակա միջոցառումներ՝ թատերական եւ համերգային ներկայացումներ, ցուցահանդեսներ, մարզական մրցումներ: Երեկոյան քաղաքի կենտրոնում անցկացված համերգային ծրագրերին մասնակցեցին ճանաչված երգիչներ Նեկա Սեբիսկվերաձեն, Ջուլիա Խուցիշվիլին, Նատո Գելաշվիլին, Գիորգի ճոխտելիձեն:

**ՆԻՆՈՇՄԻՆՊԱ.** Տոնականորեն զարդարված մունիցիպալային կենտրոնում հանդիսավորությամբ նշվեց Վրաստանի անկախության վերականգնման 104-րդ տարեդարձը: Տոնի առիթով կազմակերպվեցին մշակութային եւ մարզական միջոցառումներ, գյուղմթերքների ցուցահանդես-վաճառքներ, թատերական եւ համերգային ներկայացումներ: Միջոցառումներին իրենց մասնակցությունը բերեցին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ամբատ Կյուրեյանը, մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը, տե-

միջոցառումներին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, երկրի օրենսդիր եւ գործադիր իշխանության, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, Վրաստանում գործող հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Շնորհավորելով երկրի բնակչությանը Վրաստանի անկախության օրվա առթիվ, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին իր երախտիքը հայտնեց բոլոր նրանց, ում համար հայրենիքն ու ազատությունը գերագույն արժեք են, ովքեր վառ են պահում մեր մեծ նախնիների հիշատակը եւ մասնակցում Վրաստանի ավելի լավ ապագայի ամենօրյա կերտմանը:

- Մայիսի 26-ը մեր ազատության օրն է: Օր, որն ամենաշատը համախմբում է Վրաստանի քաղաքացիներին: Մեր ամենակարեւոր ազգային տոնի՝ Անկախության օրվա առթիվ շնորհավորում են մեր հպարտ բանակին: Շնորհավորում են բոլոր ուսուցիչներին ու հողագործներին, բժիշկներին ու շինարարներին, մարզիկներին ու արվեստագետներին, զինվորներին ու ոստիկաններին, մեր երիտասարդներին ու մեծերին, ում համար հայրենիքն ու ազատությունը գերագույն արժեք են, վառ են պահում մեր մեծ նախնիների հիշատակը եւ նպաստում ավելի լավին, Վրաստանի ապագայի կառուցմանը:

Երախտագիտության զգացումով շնորհավորում են մեր օտարազգի ընկերներին, որոնց անկեղծ օջակցությունը մենք շարունակում ենք զգալ անկախության ձեռքբերումից ի վեր, եւ ովքեր այս օրը նշում են մեզ հետ:

Մայիսի 26-ին մենք խոնարհվում ենք մեր հերոսների, մեծ նախնիների պայծառ հիշատակի առջեւ, ովքեր հայրենիքի անկախության գաղափարին նվիրել են ամենաթանկը՝ իրենց կյանքը,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին իր խոսքում նշեց, որ մայիսի 26-ը՝ Վրաստանի անկախու-



րում է տվել հայրենիքի ու ազգի առաջ՝ այդ կերպ պաշտոնապես միանալով Վրաստանի պաշտպանության ուժերին:

Բացի Թբիլիսիից, ժամկետային զինծառայողները երդում են տվել Քվեմո Զարթլիում՝ Դմանիսի քաղաքի մոտ, նաեւ Կախեթիում՝ Չոլողաշվիլու ազգայնական ամրոցում, Խելսուրեթիում՝ Գուրամի խաչի մոտ, Գուրիայում՝ Արարչի տաճարի մոտ, Փոթիում:

## ԵՐԿԻՐԸ ՆՇԵՑ ԱՆԿԱՒՈՒԹՅԱՆ ՕՐԸ


**ԱՄԱԼՔԻՍԵՒ.** Վրաստանի անկախության տոնի առթիվ մունիցիպալային կենտրոնում անցկացված միջոցառմանը բնակիչներին շնորհավորեցին Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի տեղակալ Շոթա Ռեխվիաշվիլին եւ Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Սելբոն Մակարյանն ու սակ-

րական ինքնակառավարման մյուս ղեկավարները:

**ԱՄԱԼՔԻՍԵՒ.** Մայիսի 26-ին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլին, Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Վալերիան Գոբրոնիձեն, Ախալցխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, մունիցիպալիտետի սակրեբուլոյի փոխնախագահ Յամբարձում Բաբոյանը մասնակցեցին Վրաստանի անկախության վերականգնման տոնին նվիրված միջոցառումներին: Ախալցխեում եւ Ախալցխեի բերդի տարածքում անցկացվեցին մշակութային եւ մարզական միջոցառումներ, պատմական ցուցահանդեսներ, թատերական եւ երաժշտական ներկայացումներ: Կայացավ Ախալցխեի քաղաքապետարանի կրթաթոշակառուներին դիպլոմներով եւ հուշանվերներով պարգևատրման ավանդական արարողությունը:

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԵՏ

# ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ. «ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՈՎ ԵՄ ԻՆՔՍ ԻՆՁ ՄԵԾ ՆՎԵՐ ԵՄ ԱՆՈՒՄ»



Մայիսի 16-ին Վրաստանի գրողների տանը կայացավ հայաստանցի անվանի բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ Դավթյանի 75-ամյա հորելյանին նվիրված ցերեկույթը, որը նշանավորվեց Երեւանի «Արմավ» հրատարակչությունում նորերս լույս տեսած «Բազմաձայնություն» եւ «101 բանաստեղծ Գագիկ Դավթյանի թարգմանությամբ» գրքերի շնորհանդեսով: Ծանաչված ու սիրված արդի բանաստեղծի հորելյանը Թբիլիսիի բերդելու ցանկությունը պայմանավորված էր ոչ միայն նրանով, որ «Բազմաձայնություն» ժողովածուում տասնյոթ լեզուներով թարգմանված նրա ստեղծագործությունների թվում նաեւ վրացերենն էր, իսկ «101 բանաստեղծ Գագիկ Դավթյանի թարգմանությամբ» գրքում հայերենով ներկայացված օտարազգի բանաստեղծներից 35-ը՝ վրացիներ, այլեւ Վրաստանի, վաղուց ընկեր դարձած վրաց գրողների հանդեպ մեծ սիրով, նրանց հետ ուրախությունը կիսելու վաղուց ձեւավորված ավանդույթով...

Շնորհանդեսի ավարտին «Վրաստանը» գրուցեց հայ-վրացական գրական կապերի մեծ նվիրյալի՝ Գագիկ Դավթյանի հետ:

- Պարոն Դավթյան, սիրով շնորհավորում ենք, իսկապես շատ ջերմ ու անմիջական մթնոլորտ էր Թբիլիսիի գրողների տանը, մանավանդ որ, Ձեզ ներկայացնելու կարիք նույնիսկ չկար, ելույթ ունեցողներից յուրաքանչյուրը մի առանձին պատմությամբ էր կապված Ձեզ հետ...

- Դե, ընկեր-բարեկամի միջավայրում այլ կերպ չի էլ կարող լինել, մանավանդ, երբ կազմակերպիչն ու հանդիսավոր բարեկամուհիդ է՝ Վրաստանի գրողների միության համանախագահ, բանաստեղծ,

Շոթա Ռուսթավելու անվան մրցանակի դափնեկիր Մաղվալա Գոնաշվիլին, կողքիդ են սիրելի ընկերներդ՝ Հայաստանում Վրաստանի դեսպանության նախկին խորհրդական, այսօր Վրաստանի ԱԳՆ-ի պատասխանատու աշխատակից, Թբիլիսիի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Նինո Ավցիաուրին, Ռուսթավելու անվան մրցանակի դափնեկիր, նորավեպի հռչակավոր վարպետ Ռեազ Միշվելաձեն, Վրաստանի մշակույթի նախարարի խորհրդական, բանաստեղծ, արձակագիր, պետական մրցանակի դափնեկիր Գուրամ Օդիշարիան, Մթածինդա Պանթեոնի տնօրեն,

պետական մրցանակի դափնեկիր, բանաստեղծ Բադրի Քուրթաթելաձեն, գրողների միության համանախագահներ, բանաստեղծ Բաղաթեր Արաբուլին, բանասիրական գիտությունների դոկտոր, գրականագետ Սոսո Սիգուան, հայտնի նկարիչ ու բանաստեղծ Ռեզո Ադամիան, անվանի բանաստեղծուհիներ Թամար Շեխիշվիլին, Բելլա Քեբուրիան, վաստակաշատ նկարչուհի Էլենե Գամգոնիձեն, Վրաստանում Հայաստանի դեսպանատան մշակույթին առնչվող հարցերի պատասխանատու Աննա Սահակյանը, պարզապես՝ պոեզիայի սիրահարներ, վիրա-

հայ համայնքի ներկայացուցիչներ, լրագրողներ: Եվ իհարկե, ինձ հետ ժամանած տիկինս՝ Նորետա Ջահանգիրյանը, Երեւանի «Արմավ» հրատարակչության տնօրեն Արմինե Քոչարյանը, խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Ավանեսյանը, ... Այնպես որ, արեւոտ Վրաստանի ու այստեղի մարդկանց ջերմությունը նորից Հայաստան տանելու հնարավորությունն ունեցաւ ու արդեն եղածիս հավելելու վրաց ժողովրդին ամենաբնորոշ՝ շնորհակալության ու գնահատանքի գրավոր ու բանավոր խոսքը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)